տիրացու Յովսէփ տէր Առաքելեանին սարկաւագութեան վկայականը. որ է հետեւեալն

«Պատուելի տիրացու յօվսէփ տէր առաքելեան.

Հոգեւոր որդեակ մեր։

«Ըստ խնդրոյ տեղւոյս ժողովրդոց, քեզ հրամանաւ սարկաւագ օրհնեցաք և պատուիրեմք քեզ. այսուհետեւ սպասաւորել սուրբ եկեղեցւոյն և միշտ գալ ի սուրբ եկեղեցին, և զպաշտօն քոյ կատարել ի սուրբ եկեղեցւոջն և մի ծոյլ գտանիլ ի ժամ ասելոյ։ Այսու գրութեամբ մերով և հրամանաւ խսկ կարգեցաք զքեզ ի դասս հոգեւորականաց։

1828 Նոյեմբերի 12

Ի Բագու

ԱՐՔ ԵՊԻՍ. ՀԱՅՈՑ
ՇԱՄԱԽՈՒ ՄԻՆԱՍ

## ՑՈՒՑԱԿ

Նահապետաց, թագաւորաց և իշխանաց Աղուանից, քաղեալ ի պատմութենէ Մովսիսի Կաղանկատուացւոյ ի գլուխն Ա. գիրք. ժԵ գլուխ. յերես 32։ Բ. ժէ. 136։ Գ. Ը. 241։ Գ. Ժ. 244։ Բ. ԻԱ. 145։ Գ. ժէ. 258։ Գ. ԻԳ 271

Եւ ի պատմութենէն Յովհաննէս կաթուղիկոսի 273։ Մատթէոսի Ուռհայեցւոյ 4 և 279։ Ստեփաննոսի Օրբէլեան ԻԱ, ԽԵ. Եւ Կարապետ վարդապետ Ջահնազարեանցի յառաջաբանութիւն Աղուանից պատմութեան ԾԵ. եւայլն.

### ԱՆՈՒԱՆՔ ՆԱՀԱՊԵՏԱՑ, ԹԱԳԱՒՈՐԱՑ ԵՒ ԻՇԽԱՆԱՑ

| Հմ* | | Ամք Տեառ. |
|---|---|---|
| 1 | Առան նահապետ առ Վաղարշակաւ . . . . | . |
| 2 | Առաւիղ իշխան . . . . . . . | . |
| 3 | Աղան իշխան . . . . . . . | . |
| 4 | Վաչական Ա. արքայ Աղուանից . . . . | 250 |
| 5 | Վաչէ Ա . . . . . . . . | 275 |